

Կարծիք

Ուուզաննա Էդվարդի Գևորգյանի <<Տեքստի վերլուծության ուսուցման
տեխնոլոգիաներն անզերենի հումանիտար կողմնարոշման դասընթացներում >>
խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» / անզերեն լեզու/
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման և հիմնախնդիրը
չափազանց արդիական են՝ պայմանավորված ոչ միայն ժամանակից գիտական,
ուսումնաբարձրական, հասարակական-տնտեսական ոլորտներում գործունեություն
ծավալելու համար, օտար լեզուների խորային մակարդակով իմացության, այդ
համատեքստում բազմաժանր տեքստերի ըմբռնման կարողության ձևավորման, այլև
անձի զարգացման, մասնագիտական բազմաբարդիչ կարողունակությունների
անհրաժեշտության անառարկելի պահանջով:

Ուուզաննա Գևորգյանն ուսումնասիրել է ատենախոսության հիմնախնդիրն
առնչվող լեզվաբանական և մանկավարժական գրականություն, դիտարկել է նրանցում ներկայացված մոտեցումներն ու
սկզբունքային դասակարգումները, իր հետազոտության նպատակի և խնդիրների
տեսանկյունից դրանք համադրել է ուսումնասիրության արդյունքներին և կատարել է
հեղինակային մոտեցումներին երբեմն համահունչ, երբեմն՝ հակոտնյա
եզրակացություններ: Այս իմաստով, մենք արժանիքներից ենք համարում
ատենախոսի ուսումնասիրած գրականության մեջ հեղինակի կողմից ատենախոսի
արծարծած մտքերի, տեսությունների գրագետ և դիպուկ վերլուծությունները,
հիմնախնդիրի տեսանկյունից մեջբերումների դիտարկումն ու բովանդակության հետ
նրանց տրամաբանական առնչությունները:

Ատենախոսն, ընդունված կարգով և գիտական չափանիշներով ներկայացրել է
իր ատենախոսության թեմայի շուրջ իրականացրած ուսումնասիրությունների
նպատակը, խնդիրները, նորույթը, օրյեկտն ու առարկան:

Ռ. Գևորգյանն իր ուսումնասիրությունն իրականացրել է նախատեսված
խնդիրների շրջանակում. ներկայացրել է հումանիտար մասնագիտությունների
ուղղությամբ սովորողների՝ կարդացած բնագրի շուրջ տարաբնույթ

Վերլուծություններ և թարգմանական աշխատանքներ կատարելու կարողությունների ձևավորման հիմնախնդիրը, մշակել և փորձարկել է նշված գործընթացների արդյունավետությունը բարձրացնող տեխնոլոգիաներ, ամփոփել է փորձարարության արդյունքները և հիմնավորել ձևավորվող կարողությունների անհրաժեշտությունը՝ որպես ուսանողների մասնագիտական կարողությունների պարտադիր բաղադրիչ:

Ատենախոսը մշակել է և զիտականորեն հիմնավորել տեքստի նախաթարգմանական փուլի բայլաշարը, դիտարկել յուրաքանչյուրի նպատակն ու խնդիրները, ներկայացրել է տեքստը թարգմանելու կարողության ձևավորմանը միտված տեխնոլոգիաներ և փորձարարությամբ հիմնավորել նրանց արդյունավետությունը: Անդրադառնալով տեքստի վերլուծության ընդունված արդյունավետությունը՝ Ռ. Գևորգյանը դիտարկել է նրանց առանձնահատկությունները, առավելություններն ու կիրառման գործընթացում ծագած խնդիրները:

Ատենախոսը մանրազնին ներկայացրել է օտարալեզու տեքստը վերլուծելու ուսանողի կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները, այն արդյունավետ դարձնող իր մշակած մեթոդական կառույցի էությունը, փորձարարական աշխատանքների ընթացքն ու արդյունքները, հիմնավորել է իր առաջարկած մեթոդների կիրառման գործընթացի բայլերը, ապացուցել է փորձարարական ուսուցման արդյունքում ուսանողների վերլուծական կարողության զարգացման միտումը, որն էլ եղել է ատենախոսության թեմայի շուրջ իրականացվող ուսումասիրությունների նպատակը:

Գնահատելով Ռ. Գևորգյանի իրականացրած ուսումնասիրությունների ընթացքն ու արդյունքները՝ ներկայացնենք մի շարք դիտողություններ.

1. 1-ին դիտողությունը վերաբերում է ատենախոսության վերնազրով պայմանավորված անձշտությանը.

ա/ ատենախոսության վերնազրում և բովանդակության մեջ մշտապես գործածվում է <<տեքստի վերլուծության ուսուցում>> արտահայտությունը, որն ընդունելի չէ, տեքստը վերլուծելը կարողություն է կամ հմտություն, և այն ոչ թե պիտի ուսուցանել, այլ մշակել, զարգացնել, ձևավորել: Հետևաբար, անհրաժեշտ է այս արտահայտությունը ներկայացնել <<տեքստը վերլուծելու ուսանողի կարողության զարգացում (ձևավորում) >> ձևակերպմամբ.

թ/ ատենախոսության մեջ հաճախ են գործածվում <<տեքստի հետ աշխատանք>> երրեմն՝ <<տեքստի վրա աշխատանք>> արտահայտությունները:

Առաջին՝ <<տեքստի հետ աշխատանք>> արտահայտությունը հայերեն չէ, իսկ <<տեքստի վրա աշխատանքը>> ենթադրում է տեքստի բանասիրական, մասնագիտական կամ տեխնիկական խմբագրում և այլն: Ատենախոսության նպատակների և խնդիրների համատեքստում աշխատանքը տեքստի շուրջ է, և բովանդակության մեջ հենց այդ ուղղությամբ են ներկայացված ուսումնասիրությունները, արդյունքների վերլուծությունն ու եզրակացությունները:

2. Խնչպես նշեցինք, պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է, նրա շուրջ ատենախոսի իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները՝ կարենք, իսկ այդ ուղղությամբ մեթոդիան երաշխատվորությունները՝ պահանջված: Սակայն թեև ներածության մեջ թեմայի արդիականությունը հիմնավորված է ծավալուն շարադրանքով, սակայն, ըստ եռթյան այն անհրաժեշտ և համոզիչ ձևափափով ներկայացված չէ: Կարծում ենք, որ ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն ատենախոսի նշան մասնագիտական կարողությունների ձևավորման կարենությամբ այլև սովորողների արժեհամակարգի ձևավորմամբ, ազգային և համամարդկային արժեքների ձեռքբերմամբ, բարձրակարգ մուածողություն բաղադրիչների զարգացմամբ, նշված հատկանիշներով օժտված նոր մարդու՝ ժամանակակից բաղադրություններուն անառարկելի հրամայականով, մյուս կողմից՝ օտար լեզուների ուսուցման գործընթացում այս խնդիրների լուծումն ապահովող մանկավարժամեթոդական համակարգի անկատարությամբ:

3. Անառարկելի է, որ տեքստի շուրջ իրականացվող բազմաուղղություն վերլուծությունների, խնչպես նաև նրա նախաթարգմանական փուլում իրականացվող գործընթացների առաջին, ավելին՝ արդյունավետությունն ապահովող փուլը տեքստի ընթերցումն է՝ կարդալու տարրեր տեսակներով և զանազան հանձնարարականներով: Որպեսզի ուսանողները կարողանան ճիշտ և բոլոր իմաստային նրբերանգներով բարգմանաբար ներկայացնեն տեքստի բովանդակությունը, պիտի

հասկանան և քննարկելու դիպաշարն ու երա հաջորդամբանության տրամաբանությունը, բացահայտոն գաղտափարն նեթատեքստը, մտենախոսությունների և երկխոսությունների Էռթյունը, գործող անձանց բնութագրիների ու հոգեվիճակին և այլն: Այս կարողությունների ձևափորուն իրականացվում է տեքստը կարդալու վայրում: Հետևաբար, ուսումնասիրությունը կշահեր, եթե աստենախոսը ներկայացներ, թե նախաթարզմանական վայրում ուսանողների հետ ինչ աշխատանքներ և ինչպիս այսին իրականացնել կարդալու բնուագրում (աս կոչվում է ուղղորդվող բացատրական ընթերցանություն), որպեսզի նախաթարզմանական վայրում ամրողությամբ ապահովի թարգմանական վայրում նշգրտությունը:

4. Մտենախոսության առաջին գլխում հեղինակն առանձնացրել է և դիտարկել գեղարվեստական խոսրի վերլուծությունն ուղղությունները՝ դրանք անվանելով մակարդակներ: Մասնավորապես նշել է լեզվաբանական, գրականագիտական, շարադյուսական, ոճարանական ուղղությունները և ավելացրել նաև բանասիրական ուղղությունը: Անառակելի է, որ նշված առաջին 4 ուղղությունները հենց բանասիրական են: Հետևաբար, բանասիրական ուղղության առանձին դիտարկումը նիշտ չէ /Եջ 16 և այլուր/
5. Գեղարվեստական տեքստի բանասիրական վերլուծության ուղղությունների մեջ, մեր կարծիքով, այնոր էր դիտարկել նաև ստեղագործության բովանդակության, դիպաշարի տրամաբանական հաջորդականության, գաղտափարի հիմքում ընկած պատմական ակտները: Տեքստի այս ուղղությամբ վերլուծությունը կնպաստի ոչ միայն ստեղծագործության գաղտափարն ըստներու ուսանողների կարողության ձևափորմանը, այլև նրա թարգմանությունը գիտականորեն ճշգրիտ ներկայացնելու ունակության գարզացմանը: Դրանք անվանելով մակարդակներ:
6. Ատենախոսության շարադրանքում Գերգանը գործածել է բազմաթիվ օտարալեզու եզրույթներ, որոնց հայերեն տարրերակներն առկա են մեր բառապաշտություն և ընդունված գիտական ոլորտում: Օրինակ ուժիւրսիս կոմպետենցիա, ինտեգրատիվ, դինամիկա, կոմպոզիցիա, ապարատ, բլոկ, կոնկրետ, դեղուկցիա և այլն: Շահեկան կյանքներ ատենախոսության մեջ գործածել նշված և այլ եզրույթների հայերեն տարրերակները (կամ նշել փակագծերի մեջ)

Այսպիսով, Ռուզաննա Գևորգյանի «Տեքստի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաներն անզերենի հումանիտար կողմնորոշման դասընթացներում» խորագրով ատենախոսության վերաբերյալ մեր ներկայացրած դիտողությունները բնավ չեն ստվերում կատարված աշխատանքի գիտականությունն ու արժեքը: Ատենախոսն իր հիմնախնդրի շուրջ ուսումնասիրությունների ընթացքում դրսեռել է ինքնուրույնություն, տիրապետում է քննարկվող ոլորտի խնդիրներին ուսումնասիրության արդյունքները, նրանց հիման վրա կատարած եզրակացությունները, մշակած մեթոդական ցուցումներն ու երաշխավորությունները կարող են կիրառվել ինչպես բուհական ոլորտում, այնպես էլ հանրակրթական ավագ դպրոցների հումանիտար հոսքային դասարաններում: Ատենախոսի հրատարակած 6 հոդվածները վերաբերում են ատենախոսության խնդիրներին և ունեն գիտական արժեք:

Եզրակացություն

Գրախոսվող ատենախոսության հետազոտության թեման չափազանց արդիական է, գիտական նորույթը, տեսական, գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված տվյալների արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել որ Ռ. Գևորգյանի <<Տեքստի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաներն անզերենի հումանիտար կողմնորոշման դասընթացներում>> խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է <<ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 <<Դասավանդման և ուսուցման մեթոդիկա>> (անզերեն լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Մայրենիի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ 
Օգուստա Գևորգի Գևորգյան

Զ. Գյուլամիրյանի ստորագրությունը հաստատում են

Գիտարտուրայի Ա. Խամիլյան

18/1- Ճօդը

